Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

355.2
Հ-11

2802-10

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

№ 43

ԿՈՉ

1910 Թ. ԾՆՎԱԾՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԱՌԹԻՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

ՅԵՐԵՎԱՆ 1932

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ – ССРА
им. А. Мясникяна

09 SEP 2013
41.151

Հ. Ս. Խ. Հ. ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ.

Թանգագին ընկերնե՛ր

Կարմիր Բանակի հերթական — 1910 թ. ծնված քաղաքացիների զորակոչը մենք այս տարի անց ենք կացնում իմպերիալիստական նոր պատերազմի, առաջին հերթին Խորհրդային Միության դեմ զինված հարձակման աճող վտանգի պայմաններում։

Տնտեսության բոլոր բնագավառներում խոր ճգնաժամով բռնված կապիտալիստական բովանդակ աշխարհը գլորվում է դեպի անխուսափելի կործանում։ Համաշխարհային բուրժուազիան այդ չտեսնված մահացու ճգնաժամից դուրս գալու միակ յելքը փնտրում է պատերազմների մեջ՝ աշխարհի նոր վերաբաժանման համար։ Նա լավ գիտակցում է, որ կրիզիսի հետագա ծավալմամբ քաղաքացիական պատերազմը կդառ-

355.2
Հ-11
1008
34344

նա օրակարգի հարց։ Յեվ դրա համար ել տենդորեն պատրաստվելով նոր իմպերիալիստական պատերազմի, ավելի վայրագ ու կատաղի դարձնելով իր հարձակումը բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության և գաղութային ճնշված ժողովուրդների դեմ, անցնում է բացահայտ ֆաշիստական դիկտատուրայի, բանվոր դասակարգի դեմ գրոհի յե նետում ֆաշիստական վոհմակներին՝ նպատակ ունենալով ջախջախելու բանվորական հեղափոխական շարժումը, բանվոր դասակարգի ավանգարդ, պրոլետարական հեղափոխության կազմակերպիչ Կոմկուսակցությունները։ Փաստորեն «վերանում է» սահմանագիծը պատերազմի ու խաղաղության միջև։

Սակայն պատրաստվող պատերազմն առաջին հերթին ուղղված է Համաշխարհային պրոլետարիատի հայրենիք — Խորհրդային Միության դեմ։

Սոցիալիզմի հաղթական շինարարությունը մեր յերկրում — աշխարհում չտեսնված տեմպերով հսկայական գիգանտների կառուցումը, գյուղատնտեսության կոլեկտիվացման հսկայական հաջողությունները անասելի կատաղության են հասցնում իր

անխուսափելի անկումի նախորյակին ապրող բուրժուազիային, որը կապիտալիզմի խոր ճգնաժամի, նրա խորտակման միակ պատճառը համարում է պրոլետարիատի դիկտատուրայի պետության գոյությունն աշխարհի մի վեցերորդ մասում։

Այսպիսի պարագայում Խորհրդային Միության բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների հեղափոխական դասակարգային պարտականությունն է ավելի համախմբվել բայշևիկյան կուսակցության և նրա Լենինյան Կենտկոմի շուրջը և Համաշխարհային բանվոր դասակարգի առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ շարունակելու մեր հաստատուն պայքարը խաղաղության համար, Խորհուրդների յերկրի պաշտպանության ամրացման համար, հնգամյակը չորս տարում ավարտելու և ձեռնարկելու անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման հոյակապ գործին։

Միաժամանակ Խորհրդային Միության յուրաքանչյուր բանվորի, կոլխոզնիկի, յուրաքանչյուր աշխատավորի հեղափոխական դասակարգային պարտականությունն է բոլոր ուժերով ու միջոցներով ամրացնել,

հզորացնել կառուցվող սոցիալիզմի յերկրի զինված ու աչալուրջ պահակ Կարմիր Բանակի մարտունակությունը։

1910 թվի ծնվածների հերթական զորակոչային կամպանիան պետք է յերկրի պաշտպանության ամրացման աշխատանքների ստուգատես դառնել։ Քաղաքական այդ կարևորագույն կամպանիան պետք է դրսևորի ամբողջ աշխատավորության պատրաստականությունն ու դասակարգային բարձր զգոնությունը Խ. Ս. Հ. Մ.-ի դեմ նյութվող պատերազմի վտանգի հանդեպ։

Յուրաքանչյուր գործարան ու ձեռնարկ, յուրաքանչյուր կոլխոզ և յերկրի վողջ աշխատավորությունը պետք է իրենց վողջ ուժերի լարումով ապահովեն զորակոչային կամպանիայի հաջող ընթացքի ավարտումը՝ տալով Կարմիր Բանակին դասակարգայնորեն հարազատ, գրագետ, խաղաղասեր կայուն յեվ քիզիկապես առողջ մարտիկներ.

Յերբեք չպետք է մոռանալ, որ զորակոչային կամպանիայի ընթացքում կարևորագույնը—դա զորակոչիկների սոցիալական ընտրությունն է։ Զորակոչային կամպանիան դասակարգային պայքարի կարևորագույն ճակատամասերից մեկն է։ Ինչ-

պես մեր շինարարության բոլոր ֆրոնտներում, այնպես էլ Կարմիր Բանակի համալրման այս խոշոր մասսայական քաղաքական կամպանիայի ընթացքում ևս դասակարգային թշնամին- կուլակը և նրա գաղափարախոս դաշնակը կաշխատեն իրենց գործը կատարել, կփորձեն ձախողել զորակոչային կամպանիայի հաջող ընթացքը, կձգտեն իրենց գործակալները խծկել Կարմիր Բանակի շարքերը՝ նպատակ ունենալով ներսից թուլացնել պրոլետարական դիկտատուրայի զինված ուժերի անպարտելի հզորությունը, ինտերնացիոնալ պողպատակուռ միասնությունը, նրա հեղափոխական յերկաթյա կարգապահությունը։

Բանվորներ, կոլխոզնիկներ, աշխատավոր գյուղացիներ, յեղեք աչալուրջ և զգոն՝ զորակոչիկների սոցիալական ընտրանքի գործում, հայտնաբերեք և տեղն ու տեղը ներկայացրեք ու ջախջախեք զորակոչային կամպանիան ձախողելու և իր ագենտները Կարմիր զորանոց խծկելու կուլակի և դաշնակի բոլոր փորձերը։

Զորակոչիկներ! Կուսակցության գլխավոր գծի անշեղ կենսագործման հիման վրա բայշևիկյան տեմպերով առաջ մղվող յերկրի ինդուստրացումն ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն որքսատրե ավելի ու ավելի յեն ամրացնում Խորհուրդների յերկրի պաշտպանունակությունը։ Ինդուստրացման բազայի վրա Կարմիր Բանակը հագեցվել ու հագեցվում է ժամանակակից մարտական հզոր տեխնիկայով։ Պատրաստ յեղեք ընդունելու և տիրապետելու այդ տեխնիկային։

1910 թ. ծնվածներ, Կառուցվող սոցիալիզմի յերիտասարդ հարվածայիններ— սոցիալիստական գիգանտների, կոլխոզային դաշտերի խանդավառությունը փոխադրեք Կարմիր զորանոց, զորավիգ յեղեք Կարմիր Բանակի մարտական կորովի ավելի ու ավելի հզորացմանը։

Առաջ մղելով սոցիալիզմի կառուցման հարվածային տեմպերը, մշտ զգաստ ու աչալուրջ, կազմ ու պատրաստ լինենք վճռական և ջախջախիչ, վերջնական ու մահացու հակահարված տալու միջազգային պրոլետարիատի հայրենիք—Խորհրդային Միության դեմ պատերազմի յելնող արյունարբու իմպերիալիզմին։

«Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ու-

2338

41. 151

գում, բայց և մեր հողից ոչ մի վերշոկ չենք տա ոչ ոքի» (Ստալին)։

Կեցցեն Կարմիր Բանակի շարքերը խտացնող յերիտասարդ զորակոչայինները։

Կեցցե սոցիալիզմի աչալուրջ ու աննկուն պահակ՝ Կարմիր Բանակը։

Կեցցե Կարմիր Բանակի հաղթանակների կազմակերպիչն ու առաջնորդը՝ Համ. Կոմկուսը։

Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի Նախագահ՝

Ա. ԱՆԱՆՅԱՆ

Ժողկոմխորհի Նախագահ՝

Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Զորակոչին ուժանդակող Հանրապետական Հանձնաժողովի Նախագահ՝

Պ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Հայպետհրատի տպարան

Գ. 6217 Պատվ. 2707 Տիրաժ 3000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. публ. библиотека ՀՍԽՀ - ССРА им. А. Мясникова Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան

NL0212439